

Սարգիս Խարազեան, Յարութիւն Պետրոսեան եւ Բաղդաճիւն Զեմբուր Կարապետեան երեք-փոխ Սարգիսեանի ամբողջ վնասարկը տարակապ ոչ ոքից չը քննարկած ու չը հաստատուած երեք-փոխանական հաշիւները Առաջին ժողովում, նախկին գործակալ եւ ժողովի նախագահ Դ. Կ. Բաճ. Խարազեան թէպէտ յայտնեց ծխական ժողովին, որ ինքը քննել է Սարգիս Կարապետեանի հաշիւները եւ գրել է բոլորը ուղիղ, բայց, ինչպէս լսում ենք, հաշիւները քննելով պ. պ. հաշուաւորները գտել են, որ եկեղեցական դուրսարկից պակասում է հինգ հազար ռուբլի: Գտնելով այդպիսի խոշոր գումար ու չը նայելով, որ ընտրված օրից անցել է ամբողջ երեք տարի, մինչեւ այժմ լռել եւ ոչ մի գործ-նական միջոցի չը դիմել՝ հաշուաւորներին նե-րելի չէ: Հրաւիրում ենք հոգեւոր իշխանու-թեան եւ մեր ծխականների ուշադրութիւնը այս հանգամանքի վրա:

Ծխական

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Նորին Կայսերական Մեծութեան անուա-նակոյութեան տօնի պատճառով «Մշակ» հե-տեւեալ համարը լոյս կը տեսնի ուրբաթ, դեկ-տեմբերի 8-ին:

Թիֆլիսում տարածված է ինֆլուէնցա հի-ւանդութիւնը, որ քանի դեռում աւելի եւ աւելի վարակիչ բնակչութիւն է ստանում: Նոյն հի-ւանդութիւնը, ինչպէս հաղորդում են մայրա-քաղաքի լրագրիները, տարածված է եւ Պետեր-բուրգում: Այդտեղ հիւանդացողները թիւը այն-քան շատ է, որ դժուարութեամբ կարելի է լինում բժիշկ ճարել: Հիւանդանում են թէ հասակաւորները եւ թէ երեխաները: Ընդհան-րապէս հիւանդութիւնը թեթեւ է անցնում եւ լուրջ հետեւանքներ չէ ունենում. առհասարակ նա տևում է 2—3 օր:

Բաթումից «Եկզամ» լրագրին հաղորդում են, որ նորերս Սեւ ծովի վրա եղած փոթորիկի ժամանակ խորտակվեց թիւրքական մի նաւ, 176 գաղթականներով Ալաբայայից:

Կոմպոզիտոր պ. Բալանչիվաձէ, «Россиа» լրա-գրի խօսքով, աւարտել է «Քամար-ցիբիլի» երեք գործողութեամբ օպերան, որը շուտով լոյս կը տեսնի: Օպերան բաղկացած է վրաց ժողովրդական մելոդիաներից եւ արեւելեան ընտանորութիւն է կրում: Օպերայի հերոսներն թաւաքա թագուհին է: Օպերայի սիւզեթը շատ պարզ է եւ հիմնված է թագուհու եւ բանաստեղծ Գոշալի սիրահարութեան վրա:

Դեկտեմբերի 4-ին Թիֆլիսի նահանգական դատարանում նշանակված էր Թիֆլիսի մեշ-չաններին նախկին աւագ Արարամեանին, նախ-կին գործակալ Բեկազովի եւ նախկին գրա-գիր Կուրիչովի գործը, որ յետագայից մեղադ-րեալներից մէկի, Բեկազովի եւ վկաններից մի քանիների չը գալու պատճառով: Արարամեան մեղադրվում է իր իշխանութեան սահմաններից դուրս գալու եւ պաշտօնական կեղծիք գործե-լու մէջ, իսկ Բեկազով եւ Կուրիչով պաշտօնա-կան կեղծիքի մէջ:

Ներկայ ածխային ճգնաժամի պատճառով կառավարչական շրջաններում անընդհատ միջ-նորդութիւններ են ստացվում զանազան քա-ղաքային վարչութիւնների, ընկերութիւնների եւ գործարանատէրերի կողմից վերցնելու այն մաքրը, որին այժմ ենթարկված է Ռուսաս-տանում օտարերկրեայ քարածուխը: Այժմ, ինչպէս լսել է «Рыб. Вѣд.» լրագրից, կառա-վարութիւնը որոշել է յարգել մի քանի քաղա-քային եւ երկաթուղային վարչութիւնների միջ-նորդութիւնները ու ժամանակաւորապէս վերաց-նել քարածուխի մաքրը:

Պետերբուրգի մանկավարժական Ընկերու-թեան մէջ հարց է յարուցված հիմնելու «Ու-սուցչական տուն», որը իր մէջ կը պարունակէ մանկավարժութեան վերաբերեալ գրքերի կենտ-րոնական գրադարան, մանկավարժական պի-տոյքների ձեռնարկային ցուցանիշներ, սեփական ապահովարարական հիմնարկութիւն, փոխառու-ինայողական գանձարան եւ հիւրանոց գաւառ-ներէից եկող ուսուցիչներ եւ ուսուցչուհիների համար:

Կովկասեան դատարաններում գործերի քնն-նութեան ժամանակ, ասում է «Привз. Край» լրագրից, միշտ աչքի է ընկնում այն բանը, որ վկանները տեղացիներից նախնական քննութեան ժամանակ այլ ցուցմունք են տալիս, իսկ դա-տարանում դրան բոլորովին հակառակ ցուց-մունքներ են տալիս: Դրա մէջ մեղաւոր են

Թարգմանները, որոնք դիտմամբ աղաւաղում են վկանների ցուցմունքները: Ժողովուրդը ուղ-ղակի ասում է, թէ Թարգմանների չնորհիւ է, որ շատերը նրանցից, որոնք պէտք է Սախա-լիւում լինեն, աղաւաղում են, եւ ընդհա-կառաւ նրանք, որոնք պէտք է աղաւաղութիւն վայելէին, չը թաղակալ տանվում են: Օգուտ չաղելով մի կողմից ժողովրդի տգիտութիւնից, միւս կողմից այն հանգամանքից, որ ժողովու-րդը չը գիտէ պետական լեզուն, իսկ քննիչը — ժողովրդի լեզուն, Թարգմանիները շուտ են տալիս գործը, ինչպէս իրանց քէֆն է տալիս: Դատարանը երբեմն հապարակ խաղալիք է դառնում ճարպիկ եւ փորձված Թարգմանի ձեռքում:

Մայրաքաղաքի լրագրիներին Բագուից հա-ղորդում են, որ լեռնային վարչութեան երկհա-րիւրամեայ յօդուների առթիւ, նաւթարդիւ-նաբերողների ժողովի խորհուրդը որոշեց ող-ջունել լեռնային զեպարտամենտը մի ուղերձով պատուի պատգամաւորութիւն ուղարկելով դրա համար Պատգամաւորութեան անդամներ ըն-տրված են՝ Նօթէլ, Սկալիօվսկի, Լազարով, Խա-զէլին եւ Իգնար: Խորհուրդը, բացի դրանից, ո-րոշեց երեք ստիպեղծիկ հիմնել ի յիշատակ յօդուների—մէկը Լեռնային ինստիտուտում եւ երկուսը՝ Բագուում բացվելի լեռնային դպրո-ցում:

Ժողովրդական լուսաւորութեան միջնորդու-թիւնը մտադրութիւն ունի մօտ ժամանակնե-րում քննութեան ենթարկել այն հարցը, թէ կարելի է արդեօք թոյլ տալ ընտրական դպրոցների ընթացաւարտներին, առանց լրա-ցուցիչ քննութեան, մտնել համալսարանների մի քանի ֆակուլտետներ:

Ժողովրդական լուսաւորութեան միջնորդու-թեան մէջ մտադրութիւն կայ ուսուցչական ինստիտուտների կանոնադրութիւնը վերաքն-նութեան ենթարկելու ժամանակ պարտաւորա-կան դարձնել արհեստների դատաւանդութիւնը:

Կովկասի ազգաբնակչութեան մէջ մասնագի-տական տէնիսական գիտութիւնների տարա-ծելու նպատակով, ժողովրդական լուսաւորու-թեան միջնորդութիւնը, «НОВОСТИ» լրագրի խօսքով, եկող 1901 թ-ի համար առանձին կրեդիտ է խնդրում պրօֆէսորայ կրթութեա-նը նպաստելու կովկասեան նահանգի եւ չրջան-ների տարրական դպրոցների համար:

ՕՐԲԱԶԱՐԻՑ (Կրիմ) մեզ հաղորդում են, որ նոյեմբերի 21-ին այնտեղ հոգեհանգիստ է կա-տարվել Խորէն եպիսկոպոս Ստեփանէի համար: Խօսել է Օգոստոս քահ. Հայրունի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՏԱԿԱՆՆԻՑ

Թաւրիզ, նոյեմբերի 13-ին
Անա մի շաբաթ է, ինչ Թաւրիզի հայ հասա-րակութեան զբաղեցնում է հետեւեալ դէպքը:
Միքէլ քահանայ Տէր-Գրիգորեանցը առաջ մի ձի էր ծախել ինչ որ սէյիդի: Այդ օրից անցնում է մօտ մի ամիս, նոյն սէյիդը բերում է ձին շուռ չէ, չեն ուզում: Այստեղ անտարա-թիւնով, պահանջում է, որ ձին տէր-Միքէլը յետ վերցնէ եւ վերադարձնէ փողը: Տէրտէ-րը, ի հարկէ, չէ համաձայնում, միայն անա-խորժութիւնների, կռիւների, եւ որ ամենա-զլակաւորն է, դատի դիմելու անդիք չը տալու համար, որ կարող է աւելի թանգ նստել, քան ձիու կրկնապատիկ գինը, նա իր կողմից զը-շում է 20 կ. ձի (2 ձի), իսկ սէյիդը 6 դան (1 թ. 20 կ.). եւ ձին, այդ պակասարժան գինով ծախում են մի ուրիշին: Անցնում է կարճ ժա-մանակ. սէյիդը գալիս եւ պահանջում է իր 6 դանը: Սէյիդի այդ ապօրինի, անարդար պա-հանջը զայրացնում է տէր-Միքէլի որդուն՝ Յա-րութիւն Տէր-Գրիգորեանին (ոս պաճառական է), եւ փոքր վէճ է տեղի ունենում այդ եր-կուսի մէջ, գլխաւորապէս այն մտքի շուրջը, թէ այդ պահանջը արդարացի է արդեօք:

Սէյիդը բարկացած, նեղացած եւ զայրու-թի կրակը բերանն առած՝ շուռ ապաւր, տես ինչ կանխած՝ սպառնական խօսքերով, վա-զում է քեարդուղարի մօտ, հաստատ հաւա-տացած լինելով, որ յաղթութիւնը նրա կողմը կը լինի, ով առաջ կը դիմէ, լինի դա արդար կամ մեղաւոր, եւ մի շաբա զրգարտութիւններ է բարդում Յ. Տէր-Գրիգորեանի վրա, ու չեչ-տում է այն կէտը, որ իբր թէ Տէր-

Գրիգորեանը իր կրօնը հայոցի է: Լաւ գէնք է. հէնց միայն այդ բաւական էր քեարդուղա-րին. նա բարկանում է, իսկոյն կանչել է տա-լիս Տէր-Գրիգորեանին, եւ առանց մի խօսք ասելու, առանց հարց ու փորձ անելու, ճիշդը ստուգելու, հրամայում է ձեռնել, այն էլ ինչ-պէս... Դ՛հ, սարսափելի է... Նրա ոտները նախ դնում են ֆալակայի մէջ. ապա երկու հոգով, երկու կողմերից, ինչպէս պատում են, մօտ 100 հարուած են տալիս ոտներին, այն էլ դա-ւորն ճիւղտներով: Դա հաղաւաղուտ օրինակ-ներից է: Եւ աւելի զարմանալին տեսէք, դա բաւական չէ, ձեռնողներն էլ փող են պահան-ջում, որ բարեհաճել են ձեռնել: Զարմանալի չէ... Պատում են նոյնպէս, որ երբ մէկին գլխատում են, գլխատվողի ծնողներից վար-ձատրութիւն են պահանջում:

Այդ դէպքը կայծակի արագութեամբ տա-րածվեց ամբողջ քաղաքում, եւ երբ հասնում է վաճառականների ականջին, ցնցում է նրանց: Յ. Տէր-Գրիգորեանը եւ թաղբաշը (վաճա-ռականապետը) դիմում են դատաւորին, պատ-մում են եղելութեան մասին եւ պահանջում են արգարադատութիւն: Դատաւորը կանչում է քեարդուղարին, յայտնում է վաճառականնե-րի բողոքը: Նա խոստովանվում է իր մեղքը, թէ խմած լինելով չէ հակադիմ իր արածը. ապա գնում է Տէր-Գրիգորեանի մօտ ու նե-րողութիւն է խնդրում: Թէ սէյիդի հետ ինչ-պէս կը վարվեն, յայտնի չէ:

Ֆ. Ամիր.

ՆԱՄԱԿ ԵՓԻՊՏՈՍԻՑ

Աղէքսանդրիա, նոյեմբերի 13-ին
Կղերական արքարադատութեան տխուր փա-տերը միայն Ռուսաստանի հայ հոգեւորական-ները չեն որ կընծայեն, Թիւրքիային ալ ետ չեն մնար Ռուսաստանի իրենց եղբայրակիցնե-րէն: Ահաւասիկ ինչ կը գրէ մեզ Երուսաղէմէն արժանահաւատ բարեկամ մը:

Թիւրքիայի մէջ Երուսաղէմի Ս. Յակոբայ վանքը այն ամենամեծ հայ հիմնարկութիւնն է, որ դարերէ ի վեր կլկեր է հայ ժողովրդի ջերմե-նանդութեան պտուղը, եւ փոխարէնը արդիւ-նաւոր ծառայութիւն մը չէ մատուցած նոյն ժողովրդին:

Վանքի կանոնադրի համաձայն պատրիարք եւ տնօրէն ժողովը պարտական են տարին մի ան-գամ մայիս ամսուն վանքի ելեւածից եւ իրենց ըովանդակ գործառնութեանց համարաւու-թիւնը միաբանութեան ընդհանուր ժողովին ներկայացնել: Տնօրէն ժողովի պաշտօնավարու-թեան չըլնալը չորս տարի լինելով նախորդ տը-նօրէն ժողովը հալածակ օրինաց եօթ տարի շարունակեց իր պաշտօնը առանց ներկայացնե-լու միաբանութեան իր 7 տարվայ հաշիւները: Փանի քանի անգամներ նուիրակներու ձեռքով խոշոր գումարներ բերուեցան, եւ քանի տա-րիներ շարունակվեց այն բուն հանգանակութիւնը Թիւրքիոյ հայ աղքատ ժողովրդեան մէջ, որով տառնեակ հաղարներով լիւրաները ա. Յակոբայ վանքի ծակ տակաւը նետուեցան. որչափ կա-ւածներ ծախուեցան այստեղ, բայց ինչ եղաւ ատոնց բոլորի արդիւնքները, ոչ միաբանու-թիւնը տեղեկութիւն մը ունեցաւ եւ ոչ ազգը: Վերջերս այստեղ (Աղէքսանդրիա) Երուսաղէմի սեփականութեան ընդարձակ հող մը 25000 անգը. լիւրայ վաճառուիլը լրագրիներէն միայն իմացաւ միաբանութիւնը: Ելեւածից տեսուչ մը կայ այս տեղ, որ բոլոր գործերը իր ձեռքին մէջ ժողոված է եւ ամպերէն վար չիջներ, ոչ ոքի չի ներեր իր գործին խառնուելու. առնել, տալ, գնել, վաճառել միմային իր բացարձակ իրաւունքն է, նա է, որ համարաւորութեան խոյս կուտայ, եւ ոչ իսկ տնօրէն ժողովը կա-րող է հարցուփորձել զինք, ո եւ է դիտողու-թիւն աստիկ կը զայրացնէ զինք, եւ ով կայ տնօրէն ժողովը անդամներուն, այդ օղորմելի արարածներու մէջ, որ կարող լինի ելեւածից տեսչի գործերու դէմ խօսել, ամենքս ալ պատ-րիարքով մէկ տեղ, անոր կառավարութիւնը ներն են: Անոր համար պատրիարք եւ ժողո-վական շատ յուզուեցան, երբ տառնուեօթ վար-դպիտներ եւ սարկաւազներ գիր մը ներկայա-ցուցին, որով կը պահանջէին պատրիարքէն, որ շուտով միաբանութեան ընդհանուր ժողով գու-մարէ եւ նախորդ տնօրէն ժողովի հաշիւները ներկայացնէ: Անախկալ մըն էր այս Երուսաղէ-մայ հոտած ճահիճի մէջ: Ելեւածից տեսուչը որ, ինչպէս ըսինք, նախորդ եւ արդի տնօրէն ժողովը առնեալան է, վրդովուելով այս ա-նակնկալ շարժումն, ամեն մաքրալէկական մի-ջոցները ձեռք առաւ համարաւորութիւնը յե-տաձգելու համար: Երբեքնի պատրիարքը այն ատեման կաշկանդված է այս մարդու լարած

ցանցերու մէջ, որ կը կարծէ թէ առանց ա-նոր անկարելի է Երուսաղէմի վանքը կառա-վարել եւ եթէ օր մը յանկարծ մահ-վան հրեշտակը՝ վերին Երուսաղէմի կընձ-ոտտ հաշիւները կարգադրելու համար ա. Յակո-բայ կլեւածից տեսուչը վերին Երուսաղէմը փոխադրէ, ոչ միայն ա. Յակոբայ վանքը հիմ-նայտաւ պիտի կործանի, ալ Երուսաղէմի բոլոր ազգաբնակչութիւնն ալ տալիս ու վրա պիտի լինի, քանզի ա. քաղաքի բոլոր կրօ-նական հաստատութիւնները ա. Յակոբայ ելեւածից տաղանդաւոր տեսչին կը սորվէին կանոնաւոր եւ մաքուր հաշիւներ ըռնել եւ անոր կը գիմէին իրենց հաշուական խառնա-չիփութիւնները կարգադրելու:

Տակաւին քանի մը օր է, որ համարաւու-թեան խնդիր կը յուզուի եւ անա աստի եւ անտի սպանալիքներ կը թափուին խնդրա-մատոյցներու վրա, զորս կը նախատեն եւ կը պարտաւեն իբր խոովարարներ, Վանական պատկաւելի տնօրէն ժողովն ալ ի նիստ գու-մարվելով կորոչէ համարաւորութեան խնդիր հանդիսներու գլխաւորները վանքէն հեռացնել, բայց պատրուականներով իբր թէ պաշտօնի կը դրկեն: Վանքերու հին ավան է ասիկա, հե-ռացնել, հեռաւոր անկիւններ ձգել այն ան-ձինքները, որոնք յանդիմութիւն կուենան վա-նական վարչութեան թուլութեան երեսէն տե-ղի ունեցած անհաւատարմութիւններու եւ զեղ-ծումներու դէմ խօսել եւ բողոքել Այժմ Երու-սաղէմի մէջ մի եւ նոյնը տեղի կուենայ. բայց բողոքողները կիրելի թէ չուտով չը պիտի ընկճուին եւ արիւթիւն պիտի ունենան չը լսելու անիրաւ հրամաններու Երուսաղէմի վանքը յուզման մէջ է, կենսատու հովմաւած է փչել անշարժ ճահիճի մէջ, հին եւ նոր միա-բաններէն կազմուած է բողոքող խումբը, առ-կայն ցաւալի է, որ միաբանութեան մեծամաս-նութիւնը անտարբեր կը մնայ, եւ աւելի ցա-ւալի, որ անոնցմէ շատերը բնաւոր վարչու-թեան կողմը ըռնելով՝ անոր հետ միացած են իրենց եղբայրները հալածելու:

Ստիպված ենք խոստովանելու թէ՛ աշխարհի շահամոլ եւ մարմնապաշտ ոգին մեր վանքերու մէջն ալ մուտ գործած է:

Լազարեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

—Անգլիական զինուորական միջնորդու-թիւնը հրատարակել է մի հրաման, որով հա-ղորդում են, թէ հարաւ-աֆրիկական պատե-րազմին մասնակցող բոլոր զօրքերին նշանակ-ված են հետեւեալ պարգեւները—Ֆիլդմարշալը կը ստանայ 2,500 ֆ. ստերլինգ, գեներալ-լէյտենանտը՝ 760 ֆ. ստերլինգ, գեներալ-մա-յօրը՝ 380 ֆ. ստերլինգ, բրիգադայի գեներ-ալը՝ 285 ֆ. ստերլինգ, մնացած օֆիցէրները՝ 30-ից մինչեւ 200 ֆ. ստերլինգ, նախկին իւ-րաքանչիւրի աստիճանին. ուստեր-օֆիցէրները եւ գլխուորները կը ստանան աւելի քիչ, ա-մենափոքր պարգեւը 5 ֆ. ստերլինգից պակաս չի լինի:

—Թիւրքական կառավարութիւնը նեղ դրու-թեան մէջ է դտնվում այն պատճառով, որ գիւղացիները հրաժարվում են գիւղական մուս-տար ընտրվելուց: «Ո՛ր ներքին գործերի մի-նիստը չըլաբարականները եւ ոչ մի ուրիշ խիստ միջոց—ասում է Թիւրքական լրագրիներից մէկը—չեն կարող օգնել այդ ցարէն, որովհե-տեւ գիւղական մուստարի պատմաւորութիւն-ները այն աստիճան ծանրացել են, որ ամբողջ Թիւրքայում, կարծես թէ առաջուց խօսք մէկ արած, ամենքը հրաժարվում են այդ պարտա-ւորութիւնները յանձն տնելուց: Մուստարի պաշտօնից հրաժարվելու գլխաւոր պատճառը պէտք է համարել այն հանգամանքը, որ վեր-ջին ժամանակ կառավարութիւնը ամենայն խստութեամբ հարկեր է հաւաքում եւ պա-տասխանատուութեան է ենթարկում մուստար-ներին, եթէ հարկերը կանոնաւորապէս չեն հաւաքվում: Ազգաբնակչութեան հարկատուա-կան ընդունակութիւնը հասել է minimum-ի: Մուստարները յաճախ ստիպված են լինում դիմել բռնի միջոցների, որպէս զի իրանց չե-թարկվին պատասխանատուութեան եւ մինչեւ անգամ մարմնական պատիժներին, եթէ ժամա-նակին չաջողվի նրանց պետութեան գանձարանը մտցնել պահանջված գումարները:

—Բօլնիների դրութեան եւ պատերազմական գործողութիւնների այժմեան ընթացքի մասին հարաւային Աֆրիկայում Մարտից հետադրում են Բլերին լրագրիներին հետեւեալը. «Նախագահ Շաէլի աղիւստաւ Մէլերախ-Գաղերտա եւ կաւ Մարսել եւ հաղորդեց թղթակիցներից մէկին, թէ նա ուղարկված է Կրիզէրի մօտ զիպլոմատիական յանձնարարութեամբ: Մէլեր-ախ-Գաղերտա հաւատացնում է, թէ Տրանս-վալի եւ Օրանիեան հանրապետութեան զին-ւորական կազմակերպութիւնը երբեք այնքան լաւ չէ եղել, ինչքան հիմա եւ երբեք բօլ-նիները այնքան հեռու չեն եղել անձնատուր լի-նելու դիտաւորութիւնից, որքան այժմ: Շաէլն կառավարութեան դիւանատները տեղափոխել է Ֆրէնսբուրգ եւ իշխանութիւնները շարու-

